



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15229

ԼՐ «ՅՈՒՍԱՐԵՐ»

ԹԻԻ 17

Պատմություն - թե

Ա. ԱՐՇԱԿՈՒՆԻ

հարցազրույց

1938, մայիս

*Դեր
Ժամանակ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՃԽԱՆՈՒԹԵԱՆ

Բ Ն Ո Յ Թ Ը

ՄԷԿ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1521

ԳՕՀԻՐԷ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱՐԵՐ»

1926

321

Ա-92



25 FEB 2013

321
12-92

15 APR 2009

1 DEC 200

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1921 թուի փետրուար 18-ի Հայաստանի համաժողովրդական ապստամբության հետևանքով, երկրի իշխանությունն անցաւ Փրկութեան Կոմիտէի մեօքը. 1921 թուի ապրիլ 2-ին վերջնականապէս խորտակուեցին Հայաստանի անկախ գոյութեան հիմերը. Այդ օրը Փրկութեան Կոմիտէն թողեց մեր մայրաքաղաքը՝ Նրեւանը.

Հայաստան բռնութեամբ խորհրդային կարգեր մտցնելուց յետոյ, փաստօրէն այլեւս գոյութիւն չունեցաւ հանրապետական կառավարութիւնը. Այդ ժամանակաշրջանին Լեռնահայաստանը, ուր քաշուեց Հայաստանի կառավարութիւնը, անկախ պետութիւն էր եւ ուներ իր յատուկ կառավարութիւնը, Գորիս մայրաքաղաքով:

1921 թուի ապրիլ 26-27 տեղի ունեցաւ Լեռնահայաստանի երկրորդ համագումարը պատմական Տաթևի վանքում, որն իրեն պարլամենտ հռչակեց եւ կառավարութիւն ընտրեց՝ Գ. Նժդեհի վարչապետութեամբ:

Լեռնահայաստանի կառավարութիւնը Տաթևից նոր էր վերադարձել Գորիս, երբ Գնդեւազի զօրանակատի հրամանատարութիւնից յայտնեցին կառավարութեան, թէ Խորհրդային Հայաստանից Գնդեւազ գիւղն են եկել յայտնի հրապարակագիր Դաւիթ Անանունը եւ զրագետ Ա-դօն: Սրանք յայտնում են, որ Խորհրդային Հայաստանի կառավարութեան կողմից երկու ներկայացուցիչներ՝ Ա. Կարինեանը եւ Վ. Մել-

1524

Գրադարան
ՀԱՅԿ
ՎԿԱՅԱԿՈՒՄ

1254-2009



նիկովը (ուս) սպասում են Վայոց Ձորի (Դա-
րալագեազի) Հերհեր գիւղում. Նրանք եկել են
Հայաստանի կառավարութեան հետ բանակցու-
թիւններ վարելու եւ խաղաղ մանապարնով լու-
ծելու բոլոր վիճելի խնդիրները.

Լեռնահայաստանի կառավարութիւնն այս
առաջարկը քննեց վերջնականապէս 1921 թ.
Մայիս 6-ին Գորիսում եւ որոշեց՝ Խորհրդային
Հայաստանի կառավարութեան հետ բանակցու-
թիւններ վարելու առաջարկը ջմերժել եւ իր
կողմից լիազօր ներկայացուցիչներ նշանակել
Հեռնահայաստանցիներին:

Կառավարութեան կողմից ներկայացուցիչ-
ներ նշանակուեցին, ինչպէս երեսում է բանակ-
ցութիւնների պաշտօնական արձանագրութիւն-
ներից, Գ. Տեր-Մինասեանը՝ պետական վերա-
նակիչ, պատգամաւորութեան նախագահ, բժ.
Մինաս Մինասեանը, խնամատարութեան նա-
խարար եւ Լ. Միքայէլեանը, գինւորական: Այս
պատգամաւորութիւնը Բազարջայ գիւղում իր
հետ վերցրեց, որպէս քարտուղար, Հայաստանի
պարլամենտի անդամ Գ. Շահինեանին:

Այդ բանակցութիւնների արձանագրութիւն-
ների ամբողջական պատճենը, որ գտնուում է
մեր ձեռքի տակ, առանց յանելումների, մեկ-
նաբանութիւնների ու կրճատումների, հրատա-
րակութեան ենթ յանձնում, թողնելով եզրակա-
ցութիւնը ընթերցողներին: Արժէ այդ փաստա-
թուղթն *ամբողջապէս* հրապարակի վրայ դնել,
որովհետեւ նա պարզում է հայ կառավարու-
թեան, աւելի ճիշտ, հայ մարդու մտանդու-
թիւնները հայ ժողովրդի պահպանութեան եւ



պաշտպանութեան վերաբերմամբ եւ օտար, ան-
հարազատ իղխանութեան աշխարհակալական
ձգտումները:

Հարկ ենք համարում յիշել, որ այս փաս-
տաթուղթն ամբողջովին դեռ չէ հրապարակ-
ուած, թէեւ նրա գանազան մասերը լոյս են տե-
սել գլխաւորապէս *Հայրենիք* ամսագրի մէջ:

Արձանագրութեան մէջ մի քանի տեղեր,
անկիւնաւոր փակագծերի մէջ, մենք բառեր
ենք աւելացրել, բնագիրը հասկանալի դարձնե-
լու համար:

Ա . Ա .

1926 թ. 24 Նոյեմբերի, Բէյրութ.

ՄԷԿ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՊԱՅՃՃԷՆ

ՍՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լեռնահայաստանի կառավարութեան և
Սորհրդային Հայաստանի կառավարութեան լի-
ազօր ներկայացուցիչների բանակցութեանց,
Ղալաջուղում. 1921 թ. Մայիս.

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

Նիստին մասնակցում են Լեռնահայաստա-
նի կառավարութեան կողմից՝ Գէդէոն Տէր-Մի-
նասեան, բժիշկ Մ. Մինասեան և Լեւոն Մի-
քայէլեան, Հայաստանի սովետական կառա-
վարութեան կողմից՝ Արտաշէս Կարինեան և
նուսական կորմիր բանակի կողմից՝ Վասիլիյ
Մելնիկով:

Առաջին նիստը կայացաւ մայիս 12-ին,
առաւօտեան ժամը 10-ին, Սիւնեանի Ղալաջուղ
գիւղում:

Փոխադարձաբար լիազօրութիւնները ստու-

գելուց յետոյ, փոխադարձ համաձայնութեամբ որոշուում է նիստերի նախագահութիւնը տանել փոխն ի փոխ, իսկ բանակցութիւնները վարուում են հայերէն լեզուով:

Առաջին նիստին նախագահ ընտրուում է Լեոնահայաստանի կառավարութեան դելեգացիայի անդամ նախագահ՝ Գէղէոն Տէր-Մինասեանը:

Նախագահ.— Պաշտօնական նիստը յայտարարուում եմ բացուած: «Հայաստանի սովետական կառավարութեան ընկեր դելեգատներ / Ողջունում եմ Հայաստանի սովետական կառավարութեան ներկայացուցիչների գալուստը Լեոնահայաստան: Յոյս ունեմ, որ այս երկու դելեգացիաների խորհրդակցութիւնը հնար կը տայ հաստատելու մի այնպիսի փոխ-յարաբեթիւն, որ հնարաւոր կը լինի ստեղծել վերջնական խաղաղութիւն: Լեոնահայաստանը և մասնաւորապէս Ձանգեզուրը իր աշխարհագրական դիրքով կամուրջն է հանդիսանում բոլոր անցումների, որոնք գալիս են անցնելու դէպի Մերձաւոր Արեւելք: Ձանգեզուրը իր հարեւան երկրամասերի նկատմամբ ունի նաեւ ռազմագիտական խոշոր նշանակութիւն:

Ռուսական յեղափոխութեան ընթացքում մի քանի անգամ և մի քանի կողմից փորձեր են եղել արեւելու այդ լեռնաշխարհը: Առաջին անգամ անգլիական իմպերիալիզմի ներկայացուցիչները Անդրկովկասում քանիցս ցանկացան և դիմեցին ակտիւ քայլերի յանձնելու Ձանգեզուրը և Լեոնային Ղարաբաղը Ատրէշանին, բայց Ձանգեզուրի զին-

ուած զիւղացիութիւնը ընդդիմացաւ ամենավճակաւ կերպով: Դրանից յետոյ Ատրէշանի նացիստալիստները քչեցին իրենց բանակները դէպի Ձանգեզուր ու Ղարաբաղ և ամէն անգամ ջարդուած նահանջեցին: 1919 թուին Ատրէշանի կողմից եղաւ վերջին փորձը, երբ 12 հազարնոց բանակով արշաւեցին Ձանգեզուր, բայց և մեր զինուած աշխատակորուութիւնը, հէնց Գորիսի պատերի տակ, ջարդեց նոցա: Երբ մի փառաւոր օր Ատրէշանը կարժրեց և դարձաւ սովետական, այդ անուան տակ, և շահագործելով բոլշեւիկեան լոզունգները, սովետական կարմիր զորամասեր ուղարկեցին դէպի Ձանգեզուր, որոնց յաջողուեց արեւել և ժամանակաւորապէս տէր դառնալ Ձանգեզուրի մի մասին, բայց կռիւը շարունակուում էր Ղափանի լեռներում, որը հետզհետէ ծաւալուեց նորից: Ժողովուրդը տէր դարձաւ իր երկրի մեծ մասին և ապա 1920 թ. Նոյեմբերեան ժողովրդական ընդհանուր ապստամբութեան հետեւանքով, եկւոր զօրամասերը դուրս քըչուեցին վերջնականապէս Ձանգեզուրի սահմաններից: Ընկեր պատգամաւորներ, մեծամասնական զօրամասերի հնգամսեայ ներկայութիւնը Ձանգեզուրում ո՛չ միայն ֆիզիքապէս բռնացաւ Ձանգեզուրի հայ աշխատակորութեան կամքի վրայ, այլ և բառիւ իսկական իմաստով տնտեսապէս և կուլտուրապէս քայքայեց ծայր աստիճան մեր գիւղացիութեան: Եկւոր մեծամասնականների խոշոր խոտտումները՝ կտորեղէնը, նութի, շաքարի, հացի մասին՝ մնացին լոկ խօտքեր:

Այդ դեռ բուռական չէ: Այդ պարանքները Ջաբուղից փոխադրելու պատրուակի տակ, գիւղացիութիւնից վերցրին հարիւրաւոր եզներ ու սայլեր և փոխադրական միջոցներ և մի քանի անգամ, բայց ո՛չ միայն ժողովուրդը չստացաւ խօստացեալ ապրանքը, այլ և չստացաւ իր անասունները և միւս փոխադրական միջոցները: Այդ տանելի էր. ժողովրդից հուաքեցին նրա վերջին հացահատիկը եկւոր զօրամասերին կերակրելու, բայց և մի մասը դուրս տարւեց մեր երկրից չգիտենք ինչօ՞ւ և օ՞ւր: Մի փոքրիկ հայկական գիւղ, որն օւնէր 60 գուլթանի լծկաններ, այժմ մնացել է միայն 8—9-ը: Ընկեր պատգամաւորներ, մենք ձեզ կը տանք գրաւոր ու փաստացի տւեալներ այն սօսկալի թաւանի մասին, որ կատարեց Ձանգեղուրում: Մասնաւորապէս Ձանգեղուրի կենտրոնական սքանչելի Գորիօում չմնաց ոչինչ. աւերակ են բոլոր դպրոցները, բոլոր չէնքերի յատակներն ու առաստաղները աւերւած, ջարդւած ու այրւած են ամենավանդաւական ձեւերով—օեղանները, աթոռները. դուրս են տարւած կանանց և տղամարդկանց զգեստները, օսկեղէն ու արծաթեղէն իրերը, աւերակ են բոլոր հասարակական շէնքերը: Այդ պատկերը ընդհանուր է և վերաբերում է նաև գիւղերին, որոնց համար մենք օւնինք փաստացի տւեալներ: Այս էլ գուցէ ժողովուրդը տանէր, բայց Ձանգեղուր մտան մի հազարեակ տանկական ասկեարներ, որոնք ամենալիար կերպով անօտելի չափերի հասցրին կանանց ու աղջիկների բռնաբարութիւնները, որոնք հաս-

տաւած են բժշկական քննութեամբ: Եւ փոխանակ օովետիզացիայի ենթարկելու Ձանգեղուրը, սիֆիլիզացեայի ենթարկեցին: Մենք արեւելքի ժողովուրդը ենք և մեր ժողովրդի պատւի հետ խաղալը չէր կարող մարտուել և տանելի համարուել: Դասնութեան բաժակը լցրեց Ձանգեղուրի մտաւորականութեան գըլխատուժը և աննպատակ կոտորածը: Ամենավայրագ ձեւով մթթեցին Հայաստանի պարլամենտի անդամներ Վահան Խօբէնուս, Արշակ Շիրինեանին, հասարակական գործիչ և ցարիզմի ժամանակ 12 տարի բանտրոււմ առաւապած Սաքոյին և մի քանի տասնեակ մտաւորականների, որոնց եղբայրական գերեզմանը դուք այժմ կը տեսնէք Գորիսում: 87 հօգի ունչպար և մտաւորական գնդացիներով կոտորուեցին Ջաբուղի ձորերում և Ղալազարասու «Մակեր» կոչուող բինաներում:

Այս բոլորի բնական հետեանքն եղաւ այն, որ Ձանգեղուրի ժողովուրդը բարւոք համարեց ապօտամբել, պատաւոր մահ գտնել կամ ազատագրւել եկւորների լծից, ժողովուրդը կանգնեց մի մարդու պէս ամենուր Ձանգեղուրում: Անգամ այն գիւղերը, որոնք հրաւիրել էին մեծամասնականներին, հաւատալով նոցա խօստումներին, առաջինը զէնք վերցրին և դուրս քշեցին ու ջարդեցին եկւոր զօրամասերը: Այս ապօտամբութիւնից յետոյ, ժողովուրդն ինքը ինքնաբերաբար ցանկացաւ օւնենալ մի կառավարող օրգան և ա՛ւ 1920 թ. դեկտեմբերի 25-ին պատմական Տաթև վանքում գումարեց իր անգրանիկ ժողովրդա-

կան համագումարը, որ և ընտրեց մի կառավարութիւն: Չորս ամիս անց, նորից կարիք զգացուեց համագումարը կեանքի կոչելու և ապրիլ 26-ին նոյն Տաթևում գումարուեց երկրորդ համագումարը, ուր ինքնավար Սիւնիքը կոչուեց Լեոնահայաստան, որի մէջ մտնում են Վայոց ձորը (Դարալագեազ) և լեւնային Ղարաբաղը և ընտրեց նոր կառավարութիւն և մենք պատիւ ունինք լինելու այդ երկրի ու կառավարութեան լիազօր ներկայացուցիչները: Հաւատում եմ, որ այս միացեալ նիստերում հնարաւոր կը լինի ստեղծել մի կենսաձև, որի ընթացքում կ'ապահովւի մեր ժողովրդի նամուօր, ունեցուածքը և Ֆիզիքական գոյութիւնը:

Նախագահի խօսքը ընկեր կարինեանը թարգմանում է ընկ. Մելնիկովին ուղեօրէնի, Սոսք է աւելում ընկ. Ար. Կարինեանը:

Ա. Կարինեան.— Հայաստանի Սորհրդային կառավարութիւնը յանձնարարել է ինձ յայտնել ձեզ, որ նա կամենում է խաղաղ կերպով վերջ տալ քաղաքացիական այս պատերազմին, որ տեւում է այժմ: Չանգեզուրը և Լեւնային Ղարաբաղը մնալով անկախ, փաստօրէն դառնում են գործիք իմպերիալիզմի համար, որ ուղղուում է ամենից առաջ Սորհրդային Հայաստանի դէմ: Այդ պատճառով աստղին առաջարկը, որ ուղղուում է ձեզ, դա Սորհրդային (Հայաստանի) իշխանութեան հաստատումն է Լեւնային Հայաստանում և այդ իշխանութեան հպատակեցումը Սորհրդային Հայաստանին: Այս պայմանն ընդունելու պա-

րագային ներման կ'ենթարկուեն բոլոր քաղաքական այն գործիչները, որոնք ըմբոստացել են Հայաստանի Սորհրդային իշխանութեան դէմ: Միտժամանակ ինձ յանձնարարած է յայտարարել, որ Չանգեզուրի գիւղացիութեան հողավայրը ոչ մի պարագայում չի կրճատուի, օրովհետև առանց այդ էլ Չանգեզուրի գիւղացիութիւնը այնքան սակաւահող է, որ հազիւ է նրան բաւարարում, օակայն այժմուանից իսկ յայտնում ենք, որ կայ մի կարևոր խնդիր, որ այսօր և եթ զիտի գրուի աւելի ռեալ հիմքերի վրայ: Դա քոչի խնդիրն է: Ձեզ յայտնի է, որ տափարակներում ապրող թուրք բնակչութիւնը առանց քօչի չի կարող ապրել: Մենք համոզուում ենք, որ Չանգեզուրի գիւղացիութիւնը ինքը կ'աջակցի իր կօղմից այդ քօչուորներին: Հայաստանի Սորհրդային կառավարութիւնը հաւատացած է, որ հայ և թուրք գիւղացիութեան միահամուռ ջանքերով և սովետական կառավարութեան աջակցութեամբ կարելի է այնպէս կազմակերպել այդ խնդիրը, որ քոչը ոչ մի վնաս չի հասցնի լեւներում ապրող հայ գիւղացիութեանը: Իսկ եթէ մենք կարողանանք այդ խնդիրը իրապէս լուծել, մենք կ'ամբացնենք հայ և թուրք գիւղացիութեան միջև բարի գրացիական յարաբերութիւն: Հայաստանում սովետական կառավարութիւնը ցանկանում է գէթ այսուհետև բոլոր վիճելի խնդիրները լուծել խաղաղ կերպով: Այդ նպատակով նա մտադիր է անպայման կազմակերպել հայ և թուրք գիւղացիութեան համագումար, ուր պիտի ըննուեն բոլոր

վիճելի խնդիրները: Այժմ, երբ համայն Անգրկովկասում հաստատուած է ամբար խորհրդային իշխանութիւն, հասել է այդ ժամը: Առաջարկելով ձեզ այդ բոլորը, կը խնդրէի տալ պատասխան Հայաստանի Սորհրդային կառավարութեան առաջարկին:

Լեւոն Միրայիւեան. — Առաջարկում եմ եղած առաջարկներն անել զրաւօր և կէտ առ կէտ:

Գ. Տէր-Մինասեան. — Դուք որ այսպէս առաջարկում և չտփազանց հրատապ էք համարում թուրք քոչւորների հարցը, բայց կ'ուզէի իմանալ, որտե՞ղ էին գտնուում նոքա և ինչպե՞ս էին վարուում այս վերջին 3—4 տարւայ ընթացքում:

Ա. Կարիճեան. — Ես մանրամասն տեղեկութիւն չունիմ, թէ ո՞ւր էին և ինչպէ՞ս էին անում նոքա և դժւարանում եմ այդ հարցին անմիջապէս պատասխանել: Ինչ վերաբերում է թրքական աւերակ գիւղերին, պէտք է յայտնեմ ձեզ, որ խնդրի լուծումը պետական բարդ խնդիր է: Մենք այժմ նոյն իսկ արգելում ենք, օրինակ, վերագառնալ հայ գիւղացիներին Նախալայ շրջանը: Գիտէք, անգամ եթէ որոշում լինի թոյլ տալու, այժմ օրեկտիւօրէն հնարաւոր էլ չէ: Տներն աւերուած են, կայ ցանքերի հարց և վերջապէս այդ գաղթականութիւնը շատ ցրւած է: Այնպէս որ այժմ այդ հարցը, որպէս շատ մօտիկ ապագայի խնդիր, չէ կարող անմիջապէս լուծել և անմիջապէս իրագործել գործնականապէս:

Գ. Տէր-Մինասեան. — Ես կ'ուսելացնեմ

նաև այն, որ նպատակայարմար էլ չէ, որովհետև Ջանգեզուրում հողի սոսկալի պահասութիւն կայ. անգամ իրենք թուրքերն էլ կը համաձայնեն այդ բանում, երբ յաջողի հրաւիրել մի հայ թրքաքան համագումար: Իսկ ինչ վերաբերում է քօչի հարցին, ցանկալի էր, որ այդ հարցը վճաւի և մնայ այն վիճակում, ինչպէս եղել է այս 3—4 տարւայ ընթացքում: Թոյլ տւէք մի հարց ևս առաջարկել. մի հարց, որ չափազանց կենսական է Ջանգեզուրի ժողովրդի համար. դա Նախիջևանի հարցն է. ինչ վիճակի մէջ է գտնուում այժմ Շարուր—Նախիջևանի խնդիրը:

Ա. Կարիճեան. — (Համաձայն. Սովետ. Ռուսաստանի կենդրոնական կառավարութեան և Տաճկաստանի) Շարուր—Նախիջևանը յայտարարուած է աւտոնոմ միաւոր սովետական Աղբրէջանի պրոտեկտորատի տակ և չնայած այդ աւտոնոմ զրութեանը, տեղական թուրք ազգաբնակչութիւնը դիմում է Հայաստանի սովետական իշխանութեանը և խնդրում, որ հայութիւնը, որը գաղթած է, վերագառնայ: Այդ սուղութեամբ առանձնապէս աշխատում են թուրք գործիչները:

Գ. Տէր-Մինասեան. — Ես նորից կը ցանկանալի վերագառնալ քօչի հարցին, մանաւանդ, որ ձեր խօսքի մէջ աստիճան, որ դու կ'ուզէիք վճել գրական մօքով: Դեռ ցարիք մի ժամանակ ձգտում կար իշխանութեան կողմից որևէ կերպ վերջ տալ այդ թափառական կենսաձեւին և նոցա գործնել նուսակեաց, որովհետև քօչի շրջանում տեղական ազգա-

բնակութեան և քոչի մէջ շատ յաճախ էին պատահում սպանութիւններ, թալան, կառններ, որոնք իրենց հետեանքներով դառնում էին տեղական ազգամիջեան կռիւներ: Ի՞նչ երաշխիք, որ այս պայմաններում էլ, երբ ուժեղ օրէք իշխանութիւն չկայ, նոյն դէպքերն ու անախորժութիւնները չեն կրկնուի աւելի շատ ծաւալով և աւելի վատ հետեանքներով:

Ա. Կարիքեան. — Փաստօրէն այժմ քաջ մեծ չափերով չի կարող լինել: Ազգաբնակչութեան մի մասը գողթել է, անասունների մեծ մասը կտտօրուել: Ինչ վերաբերում է գարանափային, այդ գարանափայն սովետական Հայաստանը կը տայ և դրա համար կան միջոցներ: Օրինակ՝ կը տրուին օրօշ խմբեր, քոչւորները կը զինաթափուեն և ամէն կերպ ու ամէն միջոցով կ'արգիլուի օրէք ընդհարում, որովհետեւ մենք ձգտում ենք ստեղծել այնպիսի փոխյարաբերութիւն, որ ընդհարումները վերանան ընդմիշտ: Եւ ապա գիտցէք նաև, որ մեր և Ադրբեջանի փոխյարաբերութեան տեսակէտից այդ հարցի գրական լուծումը կ'ունենայ հսկայական մօրալ նշանակութիւն և Զանգեզուրի գիւղացիութիւնը կ'ընդառաջի Ադրբեջանի գիւղացիութեան ամենակենսական պահանջին:

Վ. Մելիկով. — Այս շօշափած հարցերից անկախ ես կ'ուզէի առանձնապէս իմանալ թէ՛ ինչպէս է նայում պատգամաւորութիւնը այն հիմնական հարցին, որ Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը պէտք է մտնեն Սովետական Հայաստանի մէջ, որպէս նրա անբաժան

մասը:

Գ. Տեր-Մինասեան. — Երբ մենք ձեռնից կը ստանանք ձեր պահանջները գրաւոր և կէտա կէտ, կը խօսենք մեր կառավարութեան հետ ու նոր միայն ի վիճակի կը լինենք այդ հարցին վերջնական պատասխան տալ:

ԲԺ. Մինասեան. — Թւում է, որ այս նիստը աւելի ինֆորմացիոն բնոյթ է կրում: Ելնելով գրանից, կ'ուզէի իմանալ, թէ ի՞նչ վիճակի մէջ են գտնուում և ի՞նչ փոխյարաբերութիւն կայ այժմ Սովետական Հայաստանի և Տաճկաստանի միջև:

Ա. Կարիքեան. — Սովետական Ռուսիան կնքել է արդէն մի դաշինք Տաճկաստանի հետ, որով Կարսի նահանգը մնում է Տաճկաստանին, իսկ Ալէքսանդրապոլը իր շրջանով անցնում է Սովետ. Հայաստանին: Նոքա Ալէքսանդրապոլը արդէն մաքրել են:

ԲԺ. Մինասեան. — Ինչպէ՞ս են մաքրել, զօրքերն են քաշել, թէ ամէն տեսակէտից են մաքրել:

Ա. Կարիքեան. — Տաճկական զօրքերը միանգամայն թողել են Ալէքսանդրապոլը: Հարցերն այսպէս գնելուց և ծանօթանալուց յետոյ, այս պայմաններում, որ նկարագրուեց երկուստեք, ինչպէ՞ս է կարծում դելեգացիան, Լեռնահայաստանի կառավարութիւնը կ'ընդառաջի՞ արգօք իր առաջարկին: Մենք ի վիճակի չենք երկար սպասելու, երկուսս էլ ունինք պատասխանատու գործեր, պէտք է օր իմանանք, կը յաջողի՞ մեզ մի ընդհանուր լեզու գտնել թէ ոչ:

1254-2009



Գ. Տեր-Մինասեան. — Մեզնից անկախ պատճառներով ուշացաւ բանակցութիւններ սկսելը, որի համար գուք պէտք է ներողամիտ լինէք: Չեր այդ հարցումին, թէ կարող ենք ընդհանուր լեզու գտնել և թէ արդեօք կասա-վարութիւնը կ'ընդառաջի՞, կարող եմ վստահ առել, որ ձեր առաջադրած կէտերից շատերը մեր հաշուին գալիս են և կարող են ընդունելի լինել: Օրինակ՝ թուրքերի հարցը (լքուած դիւզերի) և մի քանի ուրիշ հարցեր, բայց ինչ վերաբերում է քոչին, այդ հարցը իր էութեամբ կապուած է ժողովրդի կենսական շահերի հետ և առանց ժողովրդի կարծիքն իմանալու չի կարելի վճիռ կայացնել: Երկրորդ փակ հարցը, դա Նախիջևանի հարցն է, որ գուք դնում էք արդէն՝ վճռուած հարց: Կը թուի ինձ, որ Նախիջևանի հարցի այդ ձևի վճռելը բնաւ բաւական չէ: Նորից ու նորից Սովետական Հայաստանը ստեղծել է Լեւոնհայաստանի թիկունքում մի ինքնավար միաւոր, որ բանում է նրա ճանապարհները: Չգիտեմ ինչպէս պէտք է սովետական Հայաստանը կապ պահպանի Լեւոնհայաստանի հետ, առանց Նախիջևանի: Պէտք է, որ այդ հարցը համարել չպառուուած և Սովետական Հայաստանը պէտք է աշխատի մի ելք գտնել, որ Նախիջևանը լինի Սովետական Հայաստանի մի մասը: Նորից եմ կրկնում, ձեր բոլոր հարցերի պատասխանը պէտք է առայտ կառավարութիւնը և այն էլ ժողովրդի կամքն իմանալուց յետոյ: Մենք անձնապէս համակիր ու տրամադիր ենք ընդառաջելու մի քանի հարցերի, թուում է այդ

հարցերին կ'ընդառաջի նաև կառավարութիւնը, բայց այդ բոլորից առաջ առանց մեր ժողովրդի կամքի և ոչ ոք ոչինչ կարող չէ անել մեր երկրում:

Ա. Կարինեան. — Մեր հարցերից քոչի հարցը այն ձևով, ինչպէս մենք ենք դնում. Լեւոնհայաստանի ժողովուրդը կ'ընդունի. ինչ վերաբերում է Նախիջևանին՝ այդ հարցը պէտք է վճռուած համարել: Այն երկրորդ, որ ունիք դուք թիկունքից — Աւտոնոմ. Նախիջևանից, պէտք է ձեզ վստահեցնեմ, որ այնտեղ տիրում է և տիրելու է Սովետական իշխանութիւն: Ծիշա է Նախիջևանը դառնում է կարծես մի նացիոնալ միաւոր, բայց մի սոսանաք, որ ըստ էութեան նա սովետական է, և որ այնտեղ միշտ պէտք է վարուի սովետական քաղաքականութիւն, որ պէտք է նօքողեկավարուեն Սովետական իշխանութեան հրահանգներով ու վարած քաղաքականութեամբ:

Մէլնիկով. — Նախիջևանի հարցը այնքան կարևոր հարց չէ, Ռուսիայում էլ օւնինք նման աւտոնոմ մանր շրջաններ, օրինակ՝ բաշկիրները և ընդհանրապէս այն տեղերում, ուր ազգաբնակչութիւնը բաւ չէ: Նայել և պէտք է կատարուէր այնտեղ Նախիջևանում: Չենթադրէք, որ կարող են սահմաններ լինել նացիոնալիստական պետական կազմով: Հաւատացէք, որ եթէ Նախիջևանում յանկարծ տիրել է (տիրի) բուրժուազիան իր քաղաքականութեամբ, ապա սովետական կառավարութիւնը այնքան ոյժ կ'ունենայ, որ առաջը կ'առնի նման հակայեփոխական ոռնձգութիւններին:

ԲԺ. Միմասեան. — Այս պարզաբանութիւնից և մաքրի փոխանակութիւնից յետոյ, կը ջանկատայինք ձեր պահանջները ստանալ գրաւոր, մէկ էլ ես կ'օւզէի իմանալ, ձեր պահանջները դուք գնում էք որպէս պահանջներ, թէ նօքա (պէտք է) մտնեն օրակարգի մէջ, դառնան բանակցութիւնների և խորհրդակցութեան առարկայ, որից յետոյ միայն ստանային իրենց վճիռները:

Ա. Կարինեան. — Որքան օր ընկեր Մելնիկովը Նախիջևանի հարցը համարի ոչ կարեւոր, բայց գտնում եմ ես, որ դա չափազանց կարեւոր խնդիր է, մանաւանդ Լեւոնա-Հայաստանի քաղաքական ապագայի աեօակէտից. Արժէ, որ այդ հարցը պարզաբանուի բոլոր կողմերից և ըստ ամենայնի ուշիմ և ուշադիր: Սխալ է ընկեր Մելնիկովը, երբ Նախիջևանի հարցը, նրա աւտոնոմ վիճակը համեմատում է Ռուսաստանում գոյութիւն ունեցող աւտոնոմ շրջանների հետ: Այն պատմական ցեղական և հոգեբանական անտազօնիզմը, որ կայ նրա (հայ) *) և թուրք ազգաբնակչութեան միջև, մեզանում պէտք է հաշուի ասնուի: Մենք (հայերս) պատմականօրէն հանդիսացել ենք մի տեսակ կօւլտուրարեզերներ մերձաւոր արևելքում, իսկ նոքա (թուրքերը) ըստ ամենայնի եղել են պատմական տարմօզը: Այլ բան է Ռուսաստանի աւտոնոմ շրջանների և ռուս ժողովրդի յարաբերութիւնները անցելում: Նոքա չեն ունեցել և ոչ մի ազգամիջ-

*) Նրա բառն աւելորդ է. պէտք է կարգաւ հայ: Ա. Ա.

եան կռիւ, ինչ մեղանում գոյութիւն ունի գարերով և բնականաբար այդ անտազօնիզմը պէտք է անգրագառնար և այդ երկրների քաղաքական վիճակի վրայ: Այս պայմանները դուա անդակուն են, ազգային, պատմական և քաղաքական հարցերը վճեւիս պէտք է ուշադրութեան աւնուեն և ըստ այնմ ձեռնն քաղաքական ազդեցութիւնների շրջանները: Ինձ էլ կը թուի, որ այդ հարցի այդ ձևի վճիռը պէտք է փոխուի, վերաքննուի, համաձայն անդական պայմանների:

Վ. Մելնիկով. — Մի երկիր, եթէ նա սովետական է, թէկոնզ և աւտոնոմ, բայց նա պէտք է առաջնորդուի կենդրօնի հրահանգներով և կառավարուի սովետական քաղաքականութեամբ, ի դուր են ձեր բոլոր վախերն ու կառկածները: Դանի կայ և գոյութիւն ունի սովետական իշխանութիւնը, չի կարող և ոչ մի պարագայում լինել ոչ վէճ, ոչ կտօրած և ոչ ընդհարում:

Ա. Կարինեան. — Ինձ կը թուի, որ խնդիրը պարզ է բաւականաչափ, ուստի կ'օւզէի իմանալ հետեւեալ հարցումի պատասխանը: Դուք ասացիք, որ համաձայն էք մի քանի կէտերի հետ: Չէ՞ք կարող արդեօք (ասել թէ) ինչ վերաբերմունք կ'ունենայ ձեր կառավարութիւնը գէպի այս խնդիրները և արամագիր կը լինի՞ բաւարար պատասխան տալու մեր հարցերին:

Գ. Տեր-Միմասեան. — Կառավարութիւնը, թոււմ է ինձ, համաձայն կը լինի որոչ կէտերի վերաբերմամբ ընդառաջելու, ընդհանուր

լեզու գտնելու: Բայց ամենից առաջ հարկա-
 ւոր են ժողովրդի կամքն ու գործնախան:
 Միշտ էլ արամադիր եմ ձեր ուշադրութիւնը.
 հրաւիրել Նախիջևանի հարցի վրայ: Դուք զուր
 էք այդքան չնչին նշանակութիւն տալիս աւ-
 տանում Նախիջևանին, որ օտարի պէս մտած է
 Հայաստանի կուրծքը, իր հետ ունենալով,
 լու է առել, թիկունք ունենալով Աւղանիս-
 տան, Պարսկաստան, Տաճկաստան: Մահմե-
 դական ծովը և ճակատում մի բուռն հայ
 ժողովուրդ: Այսպէս նայելով խնդրին, մեզ
 հարկուոր են բաւական անհերքելի և փաս-
 տական գարանտիաներ, օրինակ՝ ժողովրդի
 զինաթափումն թէ զինումն և նման մի շարք
 խնդիրներ:

Ա. Կարինեան. — Ձեր վերջին հարցը նոր
 հարց չէ, այդ մասին մտածուած է: Ձեզ պէտք
 է յայտնեմ, որ թէ Հայաստանում և թէ Վրաս-
 տանում պէտք է կազմուեն տեղական զորա-
 մասեր, անգամ աւելին, առաջին հերթին պէտք
 է զինել ժողովրդին և իրօք բոլոր նախագու-
 շական միջոցները մտածուած են և կը գոր-
 ծադուեն:

Հարցերը պարզուած համարելով, ժողովը
 օրոշում է. մայիս 12-ին, ցերեկուայ ժամը
 4-ին սովետական Հայաստանի կառավարու-
 թեան ներկայացուցիչները յանձնում են իրենց
 վերայից առաջարկները գրաւոր Լեւոնահա-
 յաստանի կառավարութեան ի քննութիւն:

Երկրորդ նիստը նշանակուում է մայիս
 12-ին, երեկոյեան ժամը 6-ին, Սիւսեանի Ղա-
 լաջուղ գիւղում: Առաջին նիստը փակուում է
 ցերեկուայ ժամը 2-ին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՍՏԻ

Լեւոնահայաստանի կառավարութեան և
 սովետական Հայաստանի կառավարութեան
 ներկայացուցիչների երկրորդ խորհրդակցու-
 թիւնը տեղի ունեցաւ 1921 թ. մայիս 12-ին,
 երեկոյեան ժամը 6-ին, նախագահութեամբ
 ընկեր Ա. Կարինեանի: Ներկայ էին՝ Լեւոն-
 հայաստանի կառավարութեան ներկայացու-
 ցիչներ՝ Գ. Տէր-Մինասեան, բժ. Մինաս Մի-
 նասեան և Լ. Միքայէլեան. սովետական Հա-
 յաստանի ներկայացուցիչներ՝ Արտ. Կարինեան
 և սուսական կարմիր բանակի ներկայացու-
 ցիչ՝ Վ. Մելնիկով:

Նիստը բացելուց, Ա. Կարինեանը իր և
 Վ. Մելնիկովի կողմից ներկայացնում է Լեւ-
 նահայաստանի կառավարութեան ներկայա-
 ցուցիչներին հետևեալ զբաւոք պաշտօնական
 դիմումը. «Որպէս Հայաստանի խորհրդային
 իշխանութեան և զօրահրամանատարութեան
 ներկայացուցիչներ, մենք կարող ենք հաղոր-
 դել, որ շատ բան նորից, որ տօնում էք զուր,
 յայտնի է մեզ: Շատ բան թերեւ մենք հնա-
 րաւորութիւն կ'ունենանք քննել նաև ապա-
 գայում և, ի հարկէ, խորհրդային իշխանու-
 թիւնը, որպէս աշխատաւոր մասսաների իշխա-
 նութիւն, պէտք է յայտարարէ անողոք կռի-
 իր տեղական վարչութեան ներկայացուցիչնե-
 րի բոլոր այն գործողութիւնների դէմ, որոնք
 օւղղուած կը լինեն զիւղացիութեան շահերի
 դէմ: Մենք այդ արել ենք ամենուրեք և միշտ
 բացերեւ կերպով խարազանել ենք մեր այն

ներկայացուցիչներին, որոնք չեղուել են խորհրդային իշխանութեան կողմից ընդգծուած ուզիղ ճանապարհից: Ահա հենց այդ քաղաքականութեան շնորհիւ է ամբողջ խորհրդային իշխանութիւնը Ռուսիայում: Այդպէս պէտք է գործէ և Հայաստանի խորհրդային իշխանութիւնը: Մեր նպատակն է վերջ տալ ազգամիջեան պատերազմներին, օտեղծել ուժեղ աշխատաւորական բանակօր-գիւղացիական իշխանութիւն Հայաստանում, մի այնպիսի իշխանութիւն, որ պիտի խաղաղ աշխատանքի և խորհրդային շինարարութեան գործի հետ կապի հայ ժողովրդի բոլոր տարրերը, գիւղացիութեան լաւագոյն խաւերից սկսած մինչև հայ մտաւորականութեան բոլոր խմբակցութիւնները անխտիր: Մեր իշխանութիւնը պէտք է յենուի մեր ժողովրդի բոլոր աշխատաւոր տարրերի վրայ և, որպէս այդպիսին, օրպէս ժողովրդական իշխանութիւն, նա այստեղ, ինչպէս և Ռուսաստանում, ձգտել և ձգտում է օգտագործել բոլոր խաղաղ միջոցները լուծելու այն խնդիրները, որոնք օտեղծել են այսօրուայ կացութիւնը: Խորհրդային կառավարութիւնը գիմել է պատերազմի միայն ամենածայրայեղ պարագային: Այժմ պատերազմը Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի շարունակուում է շնորհիւ նրան, որ Լեռնահայաստանը մնալով անջատ Հայաստանից, անկախ մի միաւոր, դրանով հենց դառնում է իմպերիալիզմի համար մի գործիք, մի զէնք, որ ուղղուում է Անգրկովկասեան Խորհրդային հանրապետութիւնների և ամենից առաջ Հայաստանի խորհրդային հանրապետութեան դէմ:

Այդ պատճառով Խորհրդային Հայաստանի և Լեռնահայաստանի միջև տեղի ունեցող ազգամական գործողութիւնների լիկվիդացիայի համար առաջին և հիմնական նախապայմանն է խորհրդային իշխանութեան հաստատութիւնը Չանգեզուրում և Լեռնային Ղարաբաղում, որը պիտի ենթարկուի Հայաստանի Խորհրդային իշխանութեան: Չանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը, որպէս Հայաստանի անքակտելի մասեր, պիտի մտնեն նրա մէջ: Խորհրդային Հայաստանը յանձնարարել է մեզ յայտնել, որ նախապայմանը ընդունուելու պարագայում, նա կը գործադրէ Չանգեզուրում խորհրդային իշխանութեան դէմ ըմբոստացածների նկատմամբ Խորհրդային Հայաստանում և Խորհրդային Վրաստանում: Ընդհանուր ամիստայի վերջին դեկրետը կը տարածուի Չանգեզուրի և Ղարաբաղի տերրիտորիայի վրայ, այն տերրիտորիայի վրայ, որը գրաւուած է Խորհրդային Հայաստանի դէմ գործող զօրամասերի կողմից: Խորհրդային իշխանութիւնը համազուած է, որ արդէն այդ միջոցները բաւական են, որպէսզի ժողովրդական մասունները, հակառակ Խորհրդային Հայաստանի մասին տարածուող պրովակացիոն լուրերին, հաւատան, որ մեր յայտարարութիւնները անկեղծ են: Գիւղացիութեան և մանր բուրժուազիայի նկատմամբ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը կը կիրառէ այն քաղաքականութիւնը, որը ընդգծուած է Ռ. Ս. Ֆ. Խ.

Դ. Սոցիալական շարժումի նախագահ ընկ. Լենինի Վրաստանի յեղկովին օւղղուած հեռագրի մէջ. Այդ միևնոյն հեռագիրը յայտարարուած է նաև Հայաստանում, որպէս ղեկավարող մի հրահանգ գործիչների համար. Այդ քաղաքակա- նութիւնը ընդհանուր գծերով նկատի օւնի մանր տնտեսութեան պաշտպանութիւնը, տնայնագործութեան և միջին գիւղացիութեան հովանաւորումը. Իսկ Զանգեզուրում, որպէս մեզ յայտնի է, տիրում է փաստօրէն հենց այդ միջին գիւղացիութիւնը. բացի դրանից, այնտեղ խօսուած է նաև ազատ առևտրի թոյլ- տուութեան, սեկվիզիցեայի արգելման մասին և այլն և այլն: Խորհրդային Հայաստանի հրահանգի համաձայն, մենք կարող ենք յայտարարել, որ Զանգեզուրից այժմ բացակա- յող ոչ մի փախստական տարր չի տեղաւորուել այնտեղ, հակառակ տեղացի գիւղացիութեան ցանկութեան: Ասելով այդ, մենք ելնում ենք նրանից, որ Զանգեզուրը հողագործութեան համար, քիչ վայր ունենալու պատճառով, ոչ միայն չի կարող կերակրել Զանգեզուրից փախած նախկին բնակիչ գաղթականներին, այլ և հազիւ կարող է կերակրել իր այժմեան բնակիչներին: Բացի դրանից, մենք նկատի օւնենք նաև այն, որ քայքայման և հին բնակատեղիների ավերման շնորհիւ այդպիսի տեղաւորումը անհնարին է օրեկտիւրէն: Սակայն Հ. Ս. կառավարութիւնը պարտք է համարում յայտարարել, որ նա ամենամօտ ապագայում պիտի կազմակերպի հայ և թուրք գիւղացիութեան համագումար, որը պիտի

նպատակ ունենայ խաղաղ և եղբայրական ձևով լուծելու բոլոր վիճելի խնդիրները և օտեղծելու աշխատաւորական այն համաշխա- տակցութիւնը, որը քանդուել է շնորհիւ թուրք և հայ ազգայնական կուսակցութիւնների քաղաքականութեան: Այսուհետև, խորհրդային իշխանութեան հաստատման հետ, Անգրկովկասում վերջ է արւում կովկասեան երեք պետութիւնների այն մեկուսացած գոյութեանը, որը ստեղծուել *) է, արհեստական կերպով, թշնամանքի և ատելութեան օուր միջավայրը: Խորհրդային իշխանութեան նպատակն է գործով ապացուցել, որ այդ հնարաւոր է իրագործել, որ հաշտութիւնը և հայ-թրքական գիւղացիութեան եղբայրական համաշխատակցութիւնը հնարաւոր է: Այդ բոլորին կ'աւելացնենք նաև այն, որ ներկայումս Հայաստանի խորհրդային իշխանութեան հետքերում է գըլխաւորապէս խաղաղ շինարարութեան և երկրի տնտեսական վերածնութեան գործը. Եւ ահա այդպիսի պարագաներում Լեւոնահայաստանի անկախ գոյութիւնը մի նոր հարուած է հասցնում մեր բանօրոգաբարձիւղացիական հայրենիքին. Լեւոնահայաստանը մնալով անկախ, փաստօրէն դառնում է մի օուր, որը օւղղուած է խորհրդ. իշխանութեան դէմ: Այդ հանգամանքը օտարում է մեզ պատերազմի հետ կապել մեր ժողովրդի այն զաւակներին, որոնք կարող էին այժմ խաղաղ շինարարական գործի

*) Ստեղծուել բառը պէտք է կարդալ ստեղծել, Ա. Ա.

անցնել: Մենք յանձնարարում ենք այստեղ յայտնել, որ բոլոր վերև դժուած կէտերը կը կատարուեն ամենայն ճշտութեամբ և կ'ապահովեն ամենայն զարանտիաներով: Մենք կը խնդրէինք շտապ կերպով քննել խորհրդային իշխանութեան առաջարկը և տալ պատասխան ամենակարճ ժամանակուայ ընթացքում:

ԲԺ. Միմասեան.— Առաջին նիստին զուք խօստացաք ձեր պահանջները տալ գրաւոր և կէտ առ կէտ: Այժմ կ'ուզենայի իմանալ միայն (Թէ) այս պաշտօնական գրութեամբ (պիտի բաւականանա՞ք), թէ պէտք է այդ գրութիւնը կանկրետացնէք, կ'ուզէի նաև իմանալ, թէ զուք ինչպէս էք ընդունում մեզ, որպէս մի սուվերէն երկրի ներկայացուցիչները՞, թէ ոչ:

Լ. Միքայիլեան.— Առաջարկում եմ ամփոփել այդ առաջարկութիւնները և տալ կէտ առ կէտ:

Մելնիկով.— Դուք առաջարկում էք ամփոփել և տալ կէտ առ կէտ, բայց թւում է, որ հասկանալի է ինքնին այն, ինչ փաստօրէն մենք տեսել ենք այս գրութեան մէջ. Եթէ համաձայնութիւն չինի մի լեզու գտնելու — ապա մենք կ'անցնենք մանրամասնութիւններին: Պէտք է բաւականանալ այս գրութեամբ:

Լ. Միքայիլեան.— Ոչինչ չի խանգարում, որ զուք առք գրաւոր և ամփոփ:

Գ. Տեր-Միմասեան.— Ես կողմնակից եմ բաւականանալ պաշտօնական գրութեամբ. ինչ վերաբերում է կէտերին, ապա նօքս առաջ կը

զօն քննութեան ընթացքում և շտա կարելի է որ նոր կէտեր էլ առաջ գան:

Ա. Կարիմեան.— Իրաւաբանական տեսակէտից մենք լիազօր ենք և պատասխանատու մեր պաշտօնական գրութեան մէջ յիշուած առաջարկներին համար:

ԲԺ. Միմասեան.— Մեր կառավարութիւնը չի իմացել այն խնդիրների մօտին, որոնք պէտք է քննութեան առնուէին այս խորհրդակցութեան մէջ և որոնք զուք առաջարկում էք: Օրինակ, ձեր պաշտօնական գրութեան մէջ զուք խօսում էք մեր երկրի քաղաքական ինքնորոշութեան գէմ մի հարց, որ ամենից կարևորն է. Ես կ'առաջարկեմ խօսուէր միայն այդ հարցի վերաբերեալ. մնացած հարցերը ես համարում եմ երկրորդական, որովհետև, երբ մենք համաձայնութեան կը գտնք այդ հիմնական խնդրի շուրջը, մնացածները կը վճռուեն ինքնին:

Գ. Տեր-Միմասեան.— Ես կրկին նայն կործիքին եմ մնում, որ պէտք է բաւականանայ արուած պաշտօնական գրութեամբ, որը մի պատասխան է մեր խօսքին, այն է՝ որ այս պաշտօնական գրութիւնը մեր երկրում զօյնութիւն ունեցող իրաւակարգի փոփոխութիւնն է առաջարկում, այն է, որ երկիրը պէտք է ենթարկուի սովետիզացիայի: Սա այնպիսի մի խնդիր է, որ անվերապահ կերպով կարող եմ ասել վերաբերում է ժողովրդին և նրա վճռելու հարցն է, ուստի և պէտք է ժողովրդի կամքը հարցնել: Մենք բաւականանանք այդ գրութեամբ և յայտնենք մեր կառավարու-

թեան :

Ա. Կարիքեանց.— Յանկալի է, որ դուք որևէ կերպ բանաձեռնէք այս բանակցութիւնների արդիւնքը : Կը ջանկանայի, որ դուք որոշ պատասխան տայիք մեր հիմնական առաջարկին, որպէսզի մենք ձեր կողմից մի որոշ պատասխան տանէինք մեր կառավարութեան ներկայացնելու :

ԲԺ. Միմասեանց.— Մեզ յանձնարարուած է մեր կառավարութեան կողմից ընդառաջ գնալու, բայց մենք չգիտենք ձեր առաջարկութիւնների մասին : Եթէ մեր կառավարութիւնն էլ ընդառաջի, ապա պէտք է ժողովրդի կամքը հարցնուի յետոյ : Մեր համաձայնութեան գալը, անչուշտ, պայմանաւորուած է այն երաշխիքներով, որ դուք և ձեր կառավարութիւնը կը տան : Մեր ժողովուրդը անկախ որևէ (մէկի) համոզելուց, պէտք է իրականի մէջ համոզուի և հաւատայ :

Գ. Տեր-Միմասեանց.— Ինչպիսի գարանաւիա էլ տաք, դա կը լինի թղթի կտոր միայն : Մեզ կարող էք ապահովեցնել, օրինակ, թէ այս կամ այն գէպքը կանխելու համար կը բերուեն առևտրական զօրամասեր, բայց յօրս չունենք, թէ այդ զօրամասերը մէկ օր չեն թողնի մեզ և հեռանան : Չէ՞ որ այդ Ռուսաստանը, հարիւր տարուաւ տիրապետութիւնից յետոյ նոյնիսկ, թողեց և հեռացաւ : Թղթի կտորներ շատ են տուել, ինչպէս Գերմանիան Բելգիային և Լեզբանը Հայաստանին : Մեր միակ գարանաւիան — մեր ժողովրդի զէնքն է ու կամքը : Մեր ժողովուրդը միշտ ուրիշ բան

է տեսել, քան իրեն յոստացել են : Եթէ անգամ մենք համաձայնենք ձեր առաջարկներին, ժողովուրդը կարող է յօշոտել մեզ : Ուստի և առաջարկուեմ եմ բաւականա՛նալ միայն պատուական գրութեամբ, որպէսզի յետոյ հնար լինի ամենաչափազանց կերպով յայտնել մեր կառավարութեան և իմանալ մեր ժողովրդի կամքը :

Ա. Կարիքեանց.— Ես ոչինչ գէ՛մ ունենալ չեմ կարող, որ այդ կարգիւնալ հարցը դառնայ նաև ժողովրդի սեփականութիւն : Յանկալի է, որ նա ևս հաւատայ և համոզուի : Եւ եթէ դուք զանուամ էք, որ այդքան կարեւոր է և անխուսափելի ժողովրդի հետ անմիջապէս խօսելը, բայց և դրանից անկախ հարկաւոր է ձեր կողմից մեզ մի ֆորմալ համաձայնութիւն, որ մեր կառավարութիւնն իմանայ, որ կայ համապատասխան համաձայնութեան մթնոլորտ :

Վ. Մելիկով.— Հետաքրքիր է իմանալ ձեր կառավարութիւնը կը գայ որոշ համաձայնութեան և եթէ համաձայնուի, թող նոր միայն հարցնի ժողովրդի կամքը : Եթէ մենք չենք կարող ապահել բոլոր խնդիրները, գոնէ որոշ պատասխան պէտք է արուի մեզ, որ մենք հաւատանք, թէ կարող ենք նորից հանդիպել : Առաջարկուեմ եմ պաշտօնական գրութիւնից զատել առաջին և հիմնական հարցը, հեռախօսով յայտնել կառավարութեան և իմանալ նրա կարծիքը : Իսկ եթէ կառավարութիւնը որոշի, որ (այդ հարցը) պէտք է որոշի

համաձայնութիւնը *), յամենայն զէպօ մենք կ'ունենանք մի որոշակի պատասխան, որ կարող կը լինենք նորից հանգիպել և լուծել միևս առաջագրած հարցերը:

Ա. Կարիճեան. — Եթէ կը յայտնէք, որ կառավարութիւնը որոշել է արգէն մերժել մեր հիմնական կէտը՝ այս բանակցութիւնները աւելորդ են: Խնդրում եմ այդ հարցին որոշակի պատասխան տալ:

Գ. Տեր-Մինասեան. — Գուցէ անմիջապէս ոչ մենք և ոչ էլ կառավարութեան անգամները զէմ չլինեն, բայց գիտցէք նաև, որ մենք չենք. որ պաշտպանել ենք այս ժողովրդին ու նրա համար հայրենիք ստեղծել. ինքը ժողովրդն է իր լուսագոյն զաւակներէ արեան գնով ստեղծել հայրենիք և կառավարութիւն. որ պաշտպանել է իրեն բոլոր կողմերից եկած սանձազուլութիւններից. Ուստի, կը խնդրէի տալ մեզ երկու օր ժամանակ, մենք ձեր առաջարկները կը յայտնենք կառավարութեան, որը կամ կը տայ իր համաձայնութիւնը և կը գնէ որոշ պայմաններ կամ կը յայտնէ, թէ համազուլմաբն է, որ այդ հարցերը (պէտք է) լուծէ վերջնականապէս:

ԲԺ. Մինասեան. — Մեր ժողովուրդը ինքն է, որ պահել է իր երկիրը և պաշտպանել այն անգլիացիների և Ադրբէյջանի սանձազուլութիւններից և այն բոլորը, որ տեսել է մեր ժողովուրդը ու զգացել իր կաշու վրայ, լսել նաև

*) Համաձայնութիւնը պէտք է կորդալ. համազուլմարը: Ա. Ա.

Հայաստանում կատարուածի մասին, պէտք է հնար արուի նրան հակառակը համոզուելու: Եւ եթէ մեր թէ զիւղացիութիւնը և թէ մաււորականութիւնը իրականում այլ բան է տեսել, ապա նա նայն իրականում պէտք է տեսնի նախկինի հակառակը: Նոքա մեզ կը հարցնեն, թէ ինչու՞ Նախիջևանը Ադրբէյջանի պրոտեկտորատի տակ է և ոչ Հայաստանի: Ինչպէ՞ս եղաւ և ինչու՞ մեծամասնականները քեմալիստներին Հայաստան բերին և տեղի ունեցաւ այն, ինչ գուք էլ էք խօստովանում: Պէտք է գարանտիան լինի գործնական և ժողովուրդը ինքը համազուլի, որ վտանգ չկայ իր գոյութեան զէմ: Ձեր Հայաստանում այժմեան վարած քաղաքականութիւնը*), չենք կարող հաւատալ, թէ կարող է երկար տեւել, և մեր ժողովրդին այդ բանում կը դժուարանանք համոզել: Գարանտիան պէտք է լինի մեր երկրից գուրս և հարկաւոր է ժամանակ, որ ժողովուրդը համոզուի: Դնենք թէ համազուլմարը յայտարարեց, թէ չենք ցանկանում ոչ մի այլ իշխանութիւն և յայտարարեց, թէ՛ ես ագրեսիւ չեմ և չեմ էլ թայլ տայ. որ մէկ ուրիշը իմ երկրի նկատմամբ ագրեսիւ լինի: Առաջէք, խնդրեմ, որ իրաւունքով է, որ գուք պէտք է ստիպէք նրան, ընդունելու նրան սովետական կարգեր: Ես կարծում եմ, որ եթէ մի կէտը զատենք և յայտնենք կառավարութեան, նա կարող է ընդունել վերջ-

*) Պէտք է կորդալ. Հայաստանում վարած մեր այժմեան քաղաքականութիւնը: Ա. Ա.

նազիր և մերժի, այն ինչ կորող է համաձայն-
նութեան եզր գտնել զուցէ, երբ մենք ամ-
բողջ պաշտօնական գրութիւնը յայտնենք կա-
ռավարութեան:

Որոշում է. — Ընկերներ Կարինեանի և
Մելնիկովի ներկայացրած պաշտօնական գրու-
թիւնը ամբողջապէս ուղարկել կառավարու-
թեան եւ պատասխանի համար օպասել մինչեւ
մայիսի 15-ը, ժամը 12-ը կէսօրուայ, որպէս
մաքսիմալ ժամանակամիջոց:

Ժողովը փակուում է երեկոյեան ժամը
9-ին: Լեռնահայաստանի պատգամաւորութեան
անգամներ՝ 1. Գէդէօն Տէր-Մինասեան. 2. բժ.
Մինաս Մինասեան. 3. Լեւոն Միքայէլեան:
Գործուղար՝ Գ. Շահինեան:

Սովետական Հայաստանի պատգամաւոր-
ներ՝ 1. Ա. Կարինեան. 2. Վ. Մելնիկով:

Լեռնահայաստանի կառավարութեան պա-
տասխանը յանձնուած է ինձ մայիսի 16-ին,
ժամը 2-ին գիշերուայ, Ղալաջուղ գիւ-
ղում՝ Ա. Կարինեան:

Լեռնահայաստանի կառավարութեան լիա-
զօր ներկայացուցիչների պաշտօնական գրու-
թեան պատասխանը, ուղղուած Սովետական
Հայաստանի կառավարութեան ներկայացու-
ցիչներ ընկ. ընկ. Ա. Կարինեանին և Վ. Մել-
նիկովին:

Սովետական Հայաստանի ներկայացու-

ցիչներ ընկ. ընկ. Ա. Կարինեանին և Հայաս-
տանի կարմիր զօրքերի ներկայացուցիչ Վ.
Մելնիկովին:

Ի պատասխան ձեր մայիս 12-ին մեզ յանձ-
նած պաշտօնական գրութեան, պատիւ ունենք
Լեռնահայաստանի կառավարութեան կողմից
յայտնելու ձեզ հետեւեալը:

Լեռնահայաստանի աշխատաւոր գիւղա-
ցիութիւնը և իր յեղափոխական ինտելիգեն-
ցիան դեռ հնուց միշտ կառչած են եղել իրենց
երկրի քաղաքական ինքնօրէն կեանքի գաղա-
փարին և օչինչ չեն խնայել զօհաբերելու այդ
գաղափարի իրագործման համար:

Ռուսական յեղափոխութիւնը իր լուրջ-
ներով — փօքր ազգերի ազատ ինքնորոշման
գաղափարով, յոյսերի և քաղաքական ակնկա-
լութիւնների նոր էտապ բաց արեց Ռուսաս-
տանի բոլոր ազգութիւնների և մասնաւորապէս
հայ աշխատաւորութեան համար:

Հայ աշխատաւորութիւնը հաւատում էր,
որ ինքը, որպէս յեղափոխութեան առաջա-
մարտիկը արեւելքում, իր յիսնամեայ յեղա-
փոխական ազատամարտով, աւելի քան իրա-
ւունք ունէր յենուել ուսուսական յեղափոխու-
թեան վրայ և իրագործուած տեսնել իր քա-
ղաքական անկախութեան անքակտելի իրա-
ւունքը: Բայց և մինչև այսօր, միշտ, ամէն
յարմար առիթի, զարկեցին նրա թիկունքին,
թէ հեռուն եւ թէ մօտիկը:

Լեռնահայաստանի աշխատաւորութիւնը
պատուով գիմազբաւեց բոլոր կողմերից եկած
հարուածներին:

Քանից անգլիական իմպերիալիզմի Անգլիկովկասեան ներկայացուցիչները ցանկացան բանանալ Լեւնահայաստանի գիւղացիութեան քաղաքական կամքի վրայ: Դաւեցին ու գաւազրեցին, որպէսզի Դարաբաղն ու Զանգեզուրը կցուեն Ադրբէյջանին: Կար եւ կը մնայ անմոռանալի մեր ժողովրդի ազատագրական կռուի պատմութեան մէջ, թէ ինչպէս 1919 թուին գեն. Շատելվարզին, իր գինեկիցներով, Գորիսում շրջապատեց զինուած գիւղացիութիւնը, մերժեց նոցա պահանջները՝ տալ իր հասարակական գործիչներին՝ Շիրինեանին եւ Շահմազեանին եւ դուրս վանտեց Զանգեզուրի սահմաններից:

Շուէն Ադրբէյջանը, յանձին իր բէգական ու խանական վարիչների, պարբերաբար Զանաց գինական օյժով զուլթել մեր լեւնաշխարհը, բայց միշտ էլ մեր գիւղացիութիւնը զէնքով պատասխանեց եւ այդ պատասխանը միշտ եղաւ յաղթանակ: Նրա կանոնաւոր դորամտերը խուժեցին մեր երկրը, խանգարեցին ու արիւնստեցին մեր բանչպարի աշխատանքը եւ Զարգուած քրուեցին մեր երկրից: Եւ այս ետամեայ կտիւնների ընթացքում, մեր գիւղացիութիւնը մի բանում համագեց իր թշնամիներին, որ Լեւնահայաստանի ժողովուրդը որոշել է լինել ինքնօրէն:

Ոչ անգլիացիք, ոչ Ադրբէյջանը եւ ոչ էլ Սուլթանովը իր հրգեհններով ու ագենտներով, չկարողացան ընկճել մեր երկրի ու ժողովրդի ինքնօրէն ապրելու եւ կառավարելու կամքը: Այդ կամքի առջ պարտուեց հակառակորդի

թէ զէնքը եւ թէ զիպլոմատիան: Ութ անգամ տեղի ունեցաւ Լեւնահայաստանի համագումար*) . ութ անգամն էլ ժողովուրդը մի բան ասաց. «Չեմ ցանկանում ոչ ոքի տիրապետութիւն եւ ես եմ, որ կարող եմ ու ցանկանում եմ կառավարել ինձ»:

Մեր ժողովրդի երեքամեայ կտիւններն ու զուկերը ամրացրին նրա մէջ աւելի քաղաքական ինքնօրէն ապրելու եւ կառավարելու անբանազատ կամքը:

Այդ բոլորից յետոյ, մէկ օր բուռնական կարմիր բանակները հասան Լեւնահայաստանի սահմաններին: Քայքայեցին երկրը անտեսուպէս, արտահանելով անասուն, հացահատիկ, լծկան, երկրագործական պարագաներ: Թաւանեցին բանագրուման անուան տակ, գիւղի ու քաղաքի ազգաբնակչութիւնից՝ զգեստ, սուկեղէն եւ արծաթեղէն, անկօղին եւ ինչ հնարէր, կտրելի: Աւերեցին երկրի բոլոր հասարակական եւ կուլտուրական շէնքերը եւ հիմնարկութիւնները (գարօցներ, գրադարաններ, հիւրանոցներ, դատարաններ, պետական շէնքեր): Թաւանեցին ու արտահանեցին երկրից գորգեր եւ այն բոլորը, ինչ համարուում էր արժէք: Սկսուեց մի չտեսնուած հալածանք մտաւորականութեան եւ գիւղական գիտակից տարրերի դէմ, տասնեակներով մորթուեցին նոքա յայտ-

*) Այս համագումարները չչփոթել Լեւնահայաստանի խորհրդային իշխանութեան գէմ ապրտամբուելուց յետոյ տեղի ունեցած երկու համագումարների հետ: Ա. Ա.

նի և անյայտ բանտերում ու ճանապարհներում: Անուսն ու որակում չունեցող չափերի հասան բռնաբարութիւնները և այլ հողի վրայ կատարուած սպանութիւնները, ամենուր բարձրացան եղբայրական գերեզմաններ:

Ա՛յո է եղել կարմիրների հնգամօթայ տիրապետութիւնը և տ՛յո է նրա գնահատութիւնը Լեւոնայաստանի ժողովրդի աչքում: Ժողովուրդը տեսաւ և զգաց իր կաշու վրայ նաև հեռուի բարեկամին ու աւելի կապեց, աներեք ու վճական իր քաղաքական անկախութեան, անգամ աւելին. նա համազօւմար հրաւիրեց, ընտրեց կառավարութիւն և վարեց իր երկիրը և ինքն էլ կպաւ խաղաղ աշխատանքի: Եւ համազօւեց մեր ժողովուրդը, որ բոլոր եկւորները մի նպատակ ունեն միայն, բռնանալ իր ինքնօրէն տարեւու կամքի վրայ, տէր դառնալ իր աշխատանքին: Եւ համազօւեց նորից ու նորից, որ ամենից լաւը ինքն իրեն տէր կանգնելն է:

Դուք ձեր պաշտօնական գրութեան մէջ վախ էք յայտնում, անգամ հիմնաւորում ձեր առաջարկները այն չստուգուած, անվաւեր փաստերի վրայ, որ Զանգեզուրը կարող է իմպերիալիստական խաղերի առարկայ դառնալ:

Ոչ օք, ով հետեւել է Լեւոնայաստանի վերջին տարիների քաղաքական անց ու դարձին, կարող է մասնանշել մի զէպք, մի առիթ, որ Զանգեզուրը խաղալիք եղած լինի որևէ իմպերիալիստ պետութեան ձեռքում:

Մեր գիւղացիութեան, ինչպէս նաև նրա յեղափոխական ինտելիգենցիայի համար, դրօժ

ազգեցութեամբ ղեկավարուելը, ընդունելի է միշտ, որպէս թշնամանք սերմանող մի հանգամանք հարեւանների միջեւ, դաւաճանութիւն գիւղացիութեան դասակարգային շահերին և նրա յեղափոխական հաւատամքին:

Պնդում ենք ամենավճակաւ կերպով, որ ժողովուրդն ու նրա ղեկավարները ոչ միայն անցեալում խաղալիք չեն եղել, այլ եւ ապագայում էլ չեն լինի:

Մենք ցանկացել ենք միշտ եւ առաջին հերթին գտնել խաղաղ կենսկցելու մի ձեւ մեր հարեւանների հետ: Զենք արել եւ ոչ մի ագրեսիւ քայլ օրեւէ ժողովրդի ու երկրի նկատմամբ, բայց եւ թօյլ չենք տուել, որ ուրիշը նօյնպէս իր թաթը մեկնի մեր աշխատանքին եւ քաղաքական անկախութեան: Եւ եթէ մեր երկրում տեղի են օւնեցել կռիւներ, նոքա տեղի են օւնեցել այն զէպքում, երբ մենք օպառնել ենք բոլոր խաղաղ միջոցները եւ ապա մղել զուտ ինքնապաշտպանողական կռիւ: Այդ կռիւների հետեւանքով մեր երկրից հեռացել են մեր անկախութեան եւ ֆիզիքական գոյութեան զէմ դաւադրողները: Եւ այժմ այդ լքած գիւղերի վերաբնակման հարցն էլ է, որ դուք շօշափում էք ձեր պաշտօնական գրութեան մէջ: Այն ձեւը, որ դուք էք առաջարկում, մենք գտնում ենք ոչ բաւարար: Այդ հարցը ոչ միայն պէտք է այսուհետեւ դառնայ օրեւէ ժողովի առարկայ, այլ եւ կարծում ենք պէտք է համարել վերջացած: Պէտք է արգիլուի օրեւէ վերաբնակութիւն Լեւոնայաստանի օտմաններում, որպէսզի

այս գերազանցօրէն յեղափոխական երկրում չլինեն տարրեր, որոնք կարող են դաւել ու դաւաճանել երկրին ու աշխատաւորութեան: Մանաւանդ որ այն սակաւահողութիւնը, որ կայ Լեռնահայաստանում, լքուած գիւղերի վերաբնակութեան զէպքում, կը դառնայ աւելի կտտաօտօֆիկ, երկիրը կը մատնուի պարբերական սովի, արտագաղթի եւ ներքին կախիկներէ:

Մի օւրիչ նոյնպէս կենսական հարց, որ առաջարկոււմ էք դուք, դա քօչի հարցն է: Թոյլ առլ, որ նորից քօչուորների հեղեղը դայ մեր լեանախարհը, նոյնիօկ եթէ ձեռք առնուած լինեն բոլոր նախագգուչական միջոցները, բայց երկիրը կը մատնուի անարխիայի, ազգամիջեան կռիւների մի թատերաբեմ կը դառնայ: Մեզ թուում է, ինչպէս եւ որտեղ սպրել ու կռուավարուել են 3—4 տարուայ ընթացքում քօչուորները, այսուհետեւ էլ շարունակեն նոյն ձեւով:

Մեր երկիրը պէտք է ազատ լինի քօչուորների ասպատակութիւնից, օրօնց ներկայութիւնը մեր լեաներում, մեր ժամանակի քաղաքական պայմաններում, կարօղ է գրօի օյֆերի համար դառնալ ագրեսիւ քաղաքականութեան գործիք:

Սակայն այս խնդիրը հնարաւօր է նօրից դնել խորհրդակցութեան մեր համագումարում եւ կարծում ենք, որ բաւարար լուծում կը ստանայ մեր ապագայ բանակցութիւնների ժամանակ:

Կենսական հարցերից է նաեւ Շարուր—Նա-

խիջեանի հարցը, որը մեր երկրի քաղաքական ապագայի տեսակէտից, ունի առաջնակարգ նշանակութիւն: Նախիջեանը աւտօնոմ եւ Ագրրէջանի պրօտեկտորատի տակ, պարզապէս նշանակոււմ է որեւէ քաղաքական տնակնկալի գէպքում, անապօհով դարձնել Լեանահայաստանի թիկօւնքը եւ կարել նրան դրօի աշխարհից եւ հաղօրդակցութեան որեւէ հնարաւօրութիւնից, մանաւանդ ձմեռը: Մենք Շարուր—Նախիջեանի քաղաքական վիճակի օյգ ձեռով օրօչելը համարում ենք աննպատակայարմար ու կը ցանկանայինք Շարուր Նախիջեանը տեանել Սօվետական Հայաստանի պրօտեկտօրատի տակ:

Բացի վերօյիչեալ զիտօղութիւններից, Լեանահայաստանի կռուավարութեան կօղմից պառիւ ունենք առաջարկելու նաեւ հետեւեալ հարցերը Հայաստանի սօվետական կռուութեան եւ կ'օւզէինք օյգ հարցերի վերաբերմամբ ունենալ նրա կարծիքը, օրօնք եւ խօրհրդակցութեան առարկայ կը դառնային մեր ապագայ բանակցութիւնների ընթացքում:

1. Լեանահայաստան ուսուական եւ հօյկական զօրամասեր բերելու խնդիրը:
2. Լեռնահայաստանի զօրքի եւ հրամանատարութեան զինաթափման հարց:
3. Լեանահայաստանի գիւղացիութեան զինելու խնդիր:
4. Լեանահայաստանի իշխանութեան կազմակերպման ձեւն ու եղանակը:
5. Քաղաքական կուսակցութիւնների եւ մամուլի խնդիր:

6. Հայերէն լեզուի պետական լեզու դարձնելու և զօրքի ու հիմնարկութիւններէ մէջ առաջնարար պահելու խնդիր:

7. Լեռնահայաստանի սահմաններից պարէն և ազմամթերք գուրս տանելու խնդիր և

8. Զօրականների, քաղաքական, հասարակական և պետական գործիչներին ինչպէս նաև յանցաւորներին Լեռնահայաստան(ից) աքսորելու խնդիր:

Այս բոլորից յետոյ, ինչ վերաբերում է Լեռնահայաստանը սովետիզացեալի ենթարկելու և սովետական Հայաստանի անբաժան մասը համարելու խնդրին, Լեռնահայաստանի կառավարութիւնը հրահանգել է մեզ յայտնելու, որ Լեռնահայաստանի սովետիզացեալի խնդիրը գուրս է իր իրաւասութիւնից, որպէս երկրի բովանդակ ժողովրդի քաղաքական բախտի անօրինումն, մի հարց, որ ժողովրդի գերագոյն իրաւունքն է և պէտք է որոշի ինքը ժողովուրդը, որի համար կը հրաւիրուի Լեռնահայաստանի համագումար, ուր և քննութեան կառնուի այդ հարցը և մեր բանակցութիւնների հեռեանքները:

Սակայն յայտնում ենք, որ Լեռնահայաստանի կառավարութիւնը ջանկալի է համարում և հաւատում է, որ կը գտնենք մի ընդհանուր լեզու անարիւն ու խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր խնդիրները և կանխելու որևէ հնարաւոր ընդհարում:

1921 թ. 16-ն մայիսի յանձնուած է սովետական Հայաստանի ներկայացուցիչներին Ղալաջուղ գիւղում:

Լեռնահայաստանի կառավարութեան լիազօր ներկայացուցիչներ՝

1. Գ. Տէր-Մինասեան

2. Բժ. Մ. Մինասեան

3. Լ. Միքայէլեան

Քարտուղար՝ Գ. Շահինեան

1921 թ. 15-ն Մայիսի, Ղալաջուղ:

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅՈՒՍԱԲԵՐ»

- 1.— ԼՌԱԾ ՋՐԱՂԱՑԸ, Հ. Զուտերման 10 է. դ.
Թրգմ. Գ. Մխիթարեան
- 2.— ԻՆՉ ՉԷՐ ԵՒ ԻՆՉ ՉՊԻՏԻ ԼԻՆԻ
ՄԵՐ ՈՒՂԻՆ Վ. Նաւասարդեան 5 է. դ.
- 3.— ՀԱՅ-ԹՐԳԱԿԱՆ ԿՆՃԻՌԸ Ռուբէն 6 է. դ.
Նախարան՝ Վ. Նաւասարդեան
- 4.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՆԵԼԻԲԸ Վ. Նաւասարդեան 8 է. դ.
- 5.— ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԲՈՂՇԵՎԻԿԵԱՆ
ԲԱՆՏՈՒՄ Բախշի Իշխանեան 10 է. դ.
Կենսագրական գծեր՝
Վ. Նաւասարդեան
- 6.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ԼԻԿԻԻԴԱՑԻԱՆ»
(Թուլեւիզմի սեռնկութեան առիթով)
Վ. Նաւասարդեան 7 է. դ.
- 7.— ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԷՆ Գ. Նոյեմ 5 է. դ.
- 8.— ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԴԵՄՈԿՐԱՏԻՉՄԸ Վ. Նաւասարդեան 2 է. դ.
- 9.— ԹԵՐԷՉ ՌԱԳԷՆ Էմիլ Զոլա
Թրգմ. Գ. Մխիթարեան 15 է. դ.
- 10.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՂԱԳԱԿԱՆ
ՈՒՂԻՆ Վ. Նաւասարդեան 7 է. դ.

- 11.— ԿԱՅՐԸ Լ. Շանք 10 է. դ.
- 12.— ՀԱՅ ՄԻՏՔԸ. Ե. Ֆրանգեան 3 է. դ.
- 13.— ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԷՃ «Յուսաբեր» 2 է. դ.
- 14.— ԿԱԹՈՒՇԿԸ Ա. Ահարոնեան 3 է. դ.
- 15.— ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱՓՈՒՈՒ
ԹԻՒՆԸ Մ. Վարանդեան 12 է. դ.
- 16.— ԿԱՐՄԻՐ ԱՍՏՂԻ ՏԱԿ (ՎԷՄ).
Վ. Վարդեան (ԾԱՄՈՒԼԻ ՏԱԿ)
- 17.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇ ԽԱ
ՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ Ա. Արշակունի 3 է. դ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ Գին 3 է. դ.
Վ. Նախասարդեան

« Ազգային գրադարան



NL0127153

11. — 10 2. 7
12. — 11 2. 7
13. — 12 2. 7
14. — 13 2. 7
15. — 14 2. 7
16. — 15 2. 7
17. — 16 2. 7
18. — 17 2. 7
19. — 18 2. 7
20. — 19 2. 7
21. — 20 2. 7
22. — 21 2. 7
23. — 22 2. 7
24. — 23 2. 7
25. — 24 2. 7
26. — 25 2. 7
27. — 26 2. 7
28. — 27 2. 7
29. — 28 2. 7
30. — 29 2. 7
31. — 30 2. 7
32. — 31 2. 7
33. — 32 2. 7
34. — 33 2. 7
35. — 34 2. 7
36. — 35 2. 7
37. — 36 2. 7
38. — 37 2. 7
39. — 38 2. 7
40. — 39 2. 7
41. — 40 2. 7
42. — 41 2. 7
43. — 42 2. 7
44. — 43 2. 7
45. — 44 2. 7
46. — 45 2. 7
47. — 46 2. 7
48. — 47 2. 7
49. — 48 2. 7
50. — 49 2. 7
51. — 50 2. 7
52. — 51 2. 7
53. — 52 2. 7
54. — 53 2. 7
55. — 54 2. 7
56. — 55 2. 7
57. — 56 2. 7
58. — 57 2. 7
59. — 58 2. 7
60. — 59 2. 7
61. — 60 2. 7
62. — 61 2. 7
63. — 62 2. 7
64. — 63 2. 7
65. — 64 2. 7
66. — 65 2. 7
67. — 66 2. 7
68. — 67 2. 7
69. — 68 2. 7
70. — 69 2. 7
71. — 70 2. 7
72. — 71 2. 7
73. — 72 2. 7
74. — 73 2. 7
75. — 74 2. 7
76. — 75 2. 7
77. — 76 2. 7
78. — 77 2. 7
79. — 78 2. 7
80. — 79 2. 7
81. — 80 2. 7
82. — 81 2. 7
83. — 82 2. 7
84. — 83 2. 7
85. — 84 2. 7
86. — 85 2. 7
87. — 86 2. 7
88. — 87 2. 7
89. — 88 2. 7
90. — 89 2. 7
91. — 90 2. 7
92. — 91 2. 7
93. — 92 2. 7
94. — 93 2. 7
95. — 94 2. 7
96. — 95 2. 7
97. — 96 2. 7
98. — 97 2. 7
99. — 98 2. 7
100. — 99 2. 7